ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 382 -ա

«27» 11 2023թ. ք. Երևան

«ՍԼԱԲ» ՍՊ, «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊ ԵՎ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի N 16-Լ հրամանով հաստատված Ջրային կոմիտեի կանոնադրության 22-րդ կետի 10-րդ ենթակետով և ստորև ներկայացված հիմքերով.

ՀԻՄՔԵՐ

Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված մակարդակաչափերի և հոսքաչափերի ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտ են ներկայացրել «ՍԼԱԲ» ՍՊ (1-5 չափաբաժիններ), «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊ (1, 4, 5 չափաբաժիններ) և «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊ (1, 4, 5 չափաբաժիններ) ընկերությունները:

Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակից «ՍԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 5-րդ չափաբաժնի համար առաջարկվող հոսքաչափի տեխնիկական անձնագրում նշված չէ ճշգրիտ աշխատանքի ջերմաստիճանային միջակայքը, որը սահմանված է հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով: Ներկայացված տեխնիկական անձնագրերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ: Մասնակիցներ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի և «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի հայտերով ներկայացված չեն Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքների տեխնիկական անձնագրերը հայերեն լեզվով՝ արտադրողի կողմից կնքված կամ արտադրող կազմակերպության տեխնիկական անձնագիրը և դրա հայերեն թարգմանությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.9 կետերի՝ գնահատող հանձնաժողովը 18.10..2023թ. թիվ 3 որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի

նիստը՝ առաջարկելով «ՍԼԱԲ» ՍՊԸ-ին, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին, «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակիցներ «ՍԼԱԲ» ՍՊԸ-ն, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն և «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 18.10.2023թ. թիվ 3 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր:

Սակայն մասնակից «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի շտկմամբ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջներին:

Մասնակից «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի 4-րդ չափաբաժնի համար շտկմամբ ներկայացված սարքի մոդելը չի համապատասխանում հայտով ներկայացված Հավելված 1.1-ով առաջարկվող սարքի մոդելին: Միաժամանակ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջներին:

Մասնակից «ՍԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից շտկմամբ ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Սակայն «ՍԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից շտկմամբ ներկայացված 5-րդ չափաբաժնի համար առաջարկվող հոսքաչափի տեխնիկական անձնագրում՝ կրկին բացակայում է հոսքաչափի ճշգրիտ աշխատանքի ջերմաստիճանային միջակայքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաշվի առնելով վերոգրյալը և ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով՝ գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքը դատական վարույթ ընդունելու և ընթացակարգի 1-ին չափաբաժինը կասեցնելու վերաբերյալ որոշումը՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՍԼԱԲ» ՍՊ (5-րդ չափաբաժնի մասով), «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊ (4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով) և «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊ (4-րդ և 5-րդ չափաբաժիններ մասով) ընկերություններին՝ որոշել ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

2. «ՍԼԱԲ» ՍՊ, «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊ և «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊ ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով,

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

27.11.2023

X

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ